ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (հայեցակարգ)

2026-2030 թթ.

Դեկանի թեկնածու՝ պ.գ.թ., դոցենտ Մ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2026 թ.

Ֆակուլտետի առաքելությունը

Վանաձորի պետական համալսարանի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի առաքելությունն է պատմության և բանասիրության ուղղություններով կրթական վերջնարդյունքների հիման վրա մշակված և ներդրված կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար ստեղծել նպաստավոր կրթամշակութային և գիտահետազոտական միջավայր: Ֆակուլտետը նպատակ ունի պատրաստել ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, բազմալեզու, մրցունակ, հետազոտական և մասնագիտական բարձր կարողություններով օժտված մասնագետներ, որոնք կկարողանան արդյունավետ գործունեություն ծավալել կրթության, մշակույթի, գիտության, թարգմանչության և այլ ոլորտներում:

Տեսլականը

Ֆակուլտետի տեսլականն է դառնալ ՀՀ հյուսիսային տարածաշրջանի առաջատար հումանիտար կրթական և հետազոտական կենտրոն: Ֆակուլտետը կձգտի պատրաստել ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխանող, մրցունակ և նորարար մասնագետներ, որոնք ունակ կլինեն առաջարկել առկա և ապագա մարտահրավերների հաղթահարման իրագործելի լուծումներ և նպաստել հասարակության կայուն զարգացմանը:

Տեսլականի իրականացման հիմնական ուղղություններն են՝

- մրցունակ և արդիական կրթական ծրագրերի իրականացում,
- միջազգային համագործակցության և ակադեմիական շարժունության զարգացում,
- գիտահետազոտական գործունեության ընդլայնում,
- բարձր մասնագիտական, հետազոտական և հաղորդակցական կարողություններով օժտված շրջանավարտների պատրաստում,
- կրթության, գիտության, մշակույթի և հանրային կյանքի ոլորտներում ֆակուլտետի հեղինակության և ազդեցության ամրապնդում:

Ընդհանուր դրույթներ

Վանաձորի պետական համալսարանի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2026–2030 թթ. զարգացման հայեցակարգի հիմքում դրված են ՀՀ «Բարձրագույն կրթություն և գիտության մասին» (2025 թ.) օրենքը, «Հայաստանի Հանրապետության կրթության պետական 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը», Հայաստանի Հանրապետության և Լոռու մարզի սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային զարգացման առաջնահերթությունների դրույթները: Հայեցակարգը համահունչ է Վանաձորի պետական համալսարանի ռազմավարական զարգացման ուղղություններին և միտված է կրթության որակի բարձրացմանը, գիտահետազոտական ներուժի զարգացմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը և տարածաշրջանային զարգացման գործընթացներում ֆակուլտետի դերակատարման ամրապնդմանը:

Պատմական ակնարկ և ֆակուլտետի ներկա վիճակը

Ֆակուլտետը ձևավորվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 16.05.2020թ. թիվ 15 նիստի 35-Լ որոշմամբ՝ նախկին Բանասիրական և Պատմաաշխարհագրական ֆակուլտետների հենքի վրա: Ե՛վ Բանասիրական, և՛ Պատմաաշխարհագրական ֆակուլտետները հիմնադրվել են 1969 թվականին՝ թողարկելով երկու՝ «Հայոց լեզու և գրականություն» ու «Պատմություն» մասնագիտությունները: Հետագայում՝ 1992 և 1996 թթ., բացվել են, համապատասխանաբար, «Անգլերեն լեզու» և «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությունները:

Հաշվետու հնգամյակում ֆակուլտետի դեկանատն ապահովել է բնականոն վարչական գործունեություն և կայուն կառավարում: Դեկանատի կողմից իրականացված հետևողական կանխարգելիչ աշխատանքների և ուսանողների հետ տարվող անհատական մոտեցման շնորհիվ անհարգելի բացակայությունների համար տրված զգուշացումների թիվը 194-ից նվազել է և հասել 126-ի: Դեկանատը կիրառել է մոտիվացիոն համակարգեր՝ խրախուսելով լավագույն կադրերին, սերտորեն համագործակցել ամբիոնների, Որակի ապահովման կենտրոնի (ՈԱԿ) հետ: Դեկանատը նաև համագործակցել է ուսանողական կառույցների հետ՝ աջակցելով ՈւԽ կամավորական դասընթացներին, մշակութային արշավներին և միջազգային շարժունության ծրագրերի կազմակերպմանը:

Ներկայումս ֆակուլտետում կրթական գործընթացը իրականացվում է բակալավրի, մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրերով: Բակալավրիատում կրթությունը առկա և հեռակա համակարգերում կազմակերպվում է հինգ մասնագիտություններով՝ «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Թարգմանչական գործ» (առկա): Մագիստրատուրայում կրթությունը կազմակերպվում է առկա ուսուցման համակարգի 4 մասնագիտություններով: Շրջանավարտների շրջանում իրականացված հարցումները փաստում են կրթության բարձր որակից գոհունակության մասին: Նրանք իրենց լիարժեք մրցունակ են համարում ժամանակակից աշխատաշուկայում:

Ուսանողական համակազմի ընդհանուր դինամիկան ըստ տարիների ունի հետևյալ տեսքը.



Ֆակուլտետի երեք ամբիոնների (Հայոց լեզվի և գրականության, Պատմության, Օտար լեզուների և գրականության) ռազմավարությունը միտված է եղել գիտական ներուժի պահպանմանն ու սերնդափոխության կայուն ապահովմանը: Ֆակուլտետի հիմնական դասախոսական անձնակազմի շուրջ 72%-ն ունի գիտական աստիճան և կոչում (գիտությունների դոկտորներ/պրոֆեսորներ, գիտությունների թեկնածուներ/դոցենտներ): 2021-2025 թթ. ընթացքում ֆակուլտետում աշխատանքի է ընդունվել տարեկան միջինում 2-3 երիտասարդ մասնագետ (մինչև 35 տարեկան): Այս

քաղաքականության շնորհիվ հաջողվել է կանխել անձնակազմի ծերացումը և միջին տարիքային ցենզը պահպանել կայուն՝ 48-52 տարեկանի սահմաններում:

2021-2026 թթ. պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տպագրված աշխատաքների պատկերը հետևյալն է



Ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) տարեկան նստաշրջաններում զեկուցումներով հանդես եկող ուսանողների թիվը



2021-2026 թթ. ԿԳՄՍ նախարարության կողմից «Լավագույն ուսանող» մրցույթին մրցանակային տեղերի են արժանացել հետևյալ ուսանողները՝

2023 թ.՝ Նանե Գևորգյան (2-րդ կարգ), Ինեսա Փելեշյան (3-րդ կարգ):

2024 թ.՝ Լիլիթ Հակոբյան (2-րդ կարգ), Անի Եղիազարյան (3-րդ կարգ):

2025 թ.՝ Անժելա Թաղևոսյան (1-ին կարգ):

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դասախոսներն ակտիվորեն ներգրավված են բուհի միջազգայնացման գործընթացին. ուսանողները մասնակցում են շարժունության ծրագրին: Շարժունության մասնակցած ուսանողների թվաքանակը՝.



Ֆակուլտետի 17 լաբորաններից 13-ը կահավորված են պրոյեկտորներով, համակարգիչներով:



ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿ 1. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Խնդիր 1.1. Կրթական ծրագրերի վերանայում և արդիականացում

Գործողություն 1.1.1. Իրականացնել աշխատաշուկայի և համապատասխան ոլորտների պահանջների պարբերական ուսումնասիրություններ:

Գործողություն 1.1.2. Շարունակաբար ձևավորել կրթական ծրագրերի խորհրդատվական խմբեր՝ գործատուների, շրջանավարտների և ոլորտային փորձագետների մասնակցությամբ:

Գործողություն 1.1.3. Շարունակել վերանայել և արդիականացնել ֆակուլտետի կրթական ծրագրերի բովանդակությունը՝ հաշվի առնելով հումանիտար գիտությունների զարգացման արդի միտումները և ծրագրային հավատարմագրման պահանջները:

Գործողություն 1.1.4. Կրթական ծրագրերում ընդլայնել արդյունահեն կրթության, հետազոտական ուսուցման և ուսանողակենտրոն մոտեցումների կիրառումը:

Գործողություն 1.1.5. Մանկավարժական ուղղվածություն ունեցող ծրագրերում ապահովել հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան կարողությունների զարգացումը:

Գործողություն 1.1.6. Ներդնել միջմասնագիտական դասընթացներ (լեզու և մեդիա, պատմություն և մշակութային ժառանգություն, լեզու և թվային տեխնոլոգիաներ, թարգմանություն և միջազգային հաղորդակցություն):

Գործողություն 1.1.7. Կատարելագործել ուսանողների մասնագիտական պրակտիկաները՝ ընդլայնելով համագործակցությունը դպրոցների, մշակութային հաստատությունների, պետական և միջազգային կազմակերպությունների հետ:

Սպասվող արդյունքներ

- *Ֆակուլտետի բոլոր կրթական ծրագրերի արդիականացում և վերանայում:*
- *Առնվազն 2 կրթական ծրագրի ծրագրային հավատարմագրում:*

• *Գործատուների և շահակիցների մասնակցության ընդլայնում կրթական ծրագրերի մշակման գործընթացներում:*

•*Շրջանավարտների մասնագիտական մրցունակության և զբաղվածության մակարդակի բարձրացում:*

•*Լեզվական, հետազոտական, մանկավարժական և միջմշակութային հաղորդակցական կարողություններով օժտված մասնագետների պատրաստում:*

ՆՊԱՏԱԿ 2. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

Խնդիր 2.1. Միջազգային ակադեմիական համագործակցության ընդլայնում

Գործողություն 2.1.1. ERASMUS+ և այլ միջազգային ծրագրերի շրջանակներում գործընկեր հաստատությունների ցանցի ընդլայնում:

Գործողություն 2.1.2. Ուսանողների և դասախոսների մասնակցության խթանում ակադեմիական շարժունության ծրագրերին:

Գործողություն 2.1.3. Միջազգային գործընկերների հետ համատեղ դասընթացների, գիտաժողովների, սեմինարների և վեբինարների կազմակերպում:

Գործողություն 2.1.4. Համատեղ հետազոտական նախագծերի իրականացում:

Գործողություն 2.1.5. Կրկնակի դիպլոմների և համատեղ կրթական ծրագրերի ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն:

Խնդիր 2.2. Օտարերկրյա ուսանողների և գիտնականների ներգրավում (2026–2030 թթ.)

Գործողություն 2.2.1. Հայոց լեզվի, հայ մշակույթի և Հայաստանի պատմության կարճաժամկետ կրթական ծրագրերի իրականացում:

Գործողություն 2.2.2. Օտարալեզու առանձին դասընթացների ներդնում և ընդլայնում:

Գործողություն 2.2.3. Օտարերկրյա ուսանողների համար ամառային և ձմեռային դպրոցների կազմակերպում :

Գործողություն 2.2.4. Միջազգային ուսանողական և մշակութային միջոցառումների կազմակերպում՝ միջմշակութային հաղորդակցության խթանման նպատակով:

Գործողություն 2.2.5. Արտերկրի բուհերի հայագիտական կենտրոնների հետ համագործակցության զարգացում:

Ակնկալվող արդյունքներ

•Ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցող ուսանողների և դասախոսների առկայություն:

•Միջազգային գործընկեր հաստատությունների թվի ավելացում:

• Համատեղ կրթական և գիտահետազոտական նախագծերի իրականացում:

• Ֆակուլտետի միջազգային տեսանելիության և հեղինակության ամրապնդում:

•Հայագիտության, լեզվական և մշակութային ժառանգության միջազգային տարածման նոր հնարավորությունների ստեղծում:

ՆՊԱՏԱԿ 3. ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Խնդիր 3.1. Ֆակուլտետի կրթական և գիտահետազոտական թվային միջավայրի արդիականացում

Գործողություն 3.1.1. Արիականացնել ֆակուլտետի թվային ենթակառուցվածքները՝ ապահովելով ուսումնական և գիտահետազոտական գործընթացների համար անհրաժեշտ ծրագրային տեխնիկական միջոցների հասանելիություն.

Խնդիր 3.2. Թվային ուսուցման և հիբրիդային կրթության կազմակերպում

Գործողություն 3.2.1. Շարունակաբար իրականցնել որոշ դասընթացների իրականացումը առկա, հեռավար և հիբրիդային ձևաչափերով:

Խնդիր 3.3. Թվային և հետազոտական հմտությունների զարգացում

Գործողություն 3.3.1. Մասնակցել դասախոսների, ուսանողների և վարչական աշխատանքների թվային կարողությունների զարգացման շարունակական ծրագրերի իրականացման աշխատանքներին:

Ակնկալվող արդյունքներ

Ֆակուլտետի լսարանների արդիականացում

Կրթական գործընթացների թվայնացման ապահովում

Դասախոսների, ուսանողների և վարչական անձնակազմի թվային կարողությունների զարգացում

ՆՊԱՏԱԿ 4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ–ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՊ

Խնդիր 4.1. Համալսարանի հանրային և համայնքային ներգրավվածության ընդլայնում

Գործողություն 4.1.1 Միջոցառումների, գիտաժողովների, սեմինարների և հանրային քննարկումների կազմակերպում՝ ուղղված հայապահպանության, մշակութային ժառանգության, լեզվի պահպանման և մարդասիրական արժեքների տարածմանը:

Գործողություն 4.1.2 Շարունակական համագործակցություն մարզի դպրոցների, մշակութային կենտրոնների և այլ կրթական հաստատությունների հետ համատեղ ծրագրերի իրականացման նպատակով:

Գործողություն 4.1.3 Ուսանողների ներգրավում համայնքային և մշակութային նախաձեռնություններում՝ որպես ակտիվ մասնակիցներ և կազմակերպիչներ:

Խնդիր 4.2. Շրջանավարտների հետ համագործակցության զարգացում

Գործողություն 4.2.1 Շրջանավարտների փորձի ներգրավում կրթական ծրագրերի փոփոխման, մասնագիտական կողմնորոշման միջոցառումներում:

Խնդիր 4.3. Մասնագիտական կողմնորոշման և հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնում

Գործողություն 4.3.1 Ավագ դպրոցների աշակերտների համար մասնագիտական կողմնորոշման հանդիպումների և բաց դասերի կազմակերպում՝ ներկայացնելով ֆակուլտետի կրթական ծրագրերը և հնարավորությունները:

Գործողություն 4.3.2 Ուսանողների ներգրավում որպես ֆակուլտետի «դեսպաններ» կրթական ծրագրերի և համալսարանական կյանքի ներկայացման գործընթացներում:

Գործողություն 4.3.3 Մշակութային, լեզվական և հումանիտար արժեքների հանրայնացման նպատակով հանրային արշավների իրականացում:

Ակնկալվող արդյունքներ

- *Ֆակուլտետ–համայնք համագործակցության ընդլայնում և ակտիվացում:*
- *Ուսանողների հասարակական ներգրավվածության աճ:*
- *Շրջանավարտների հետ կայուն և արդյունավետ կապի ձևավորում:*
- *Ֆակուլտետի հանրային ճանաչելիության և հեղինակության բարձրացում:*

ՆՊԱՏԱԿ 5. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ

Խնդիր 5.1 Դասախոսական կազմի գիտահետազոտական կարողությունների զարգացում

Գործողություն 5.1.1. Գիտաժողովների, սեմինարների և մասնագիտական քննարկումների կազմակերպում:

Գործողություն 5.1.2. Երիտասարդ դասախոսների ներգրավում ամբիոնների գիտական ուղղություններով իրականացվող նախագծերում:

Գործողություն 5.1.3. Հետազոտական գործունեության գնահատման և խրախուսման մեխանիզմների կատարելագործում

Խնդիր 5.2. Ուսանողների հետազոտական ներգրավվածության ընդլայնում

Գործողություն 5.2.1. Ուսանողների շարունակական ներգրավում հետազոտական նախագծերում և խմբային աշխատանքներում:

Գործողություն 5.2.2 Ուսանողական գիտական ընկերությունների և խմբերի թվաքանակի ավելացում:

Գործողություն 5.3.2 Ուսանողական գիտաժողովների, մրցույթների և սեմինարների շարունակական կազմակերպում:

Ակնկալվող արդյունքներ

- *Ֆակուլտետի գիտահետազոտական ակտիվության աճ:*
- *Դասախոսների և ուսանողների գիտական հրապարակումների թվի ավելացում:*
- *Երիտասարդ հետազոտողների ներգրավվածության բարձրացում:*
- *Հետազոտական մշակույթի ամրապնդում և միջմասնագիտական համագործակցության զարգացում:*

ՆՊԱՏԱԿ 6. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 6.1. Ֆակուլտետի կառավարման արդյունավետության բարձրացում

Գործողություն 6.1.1 Մասնակցություն վարչական աշխատակազմի շարունակական վերապատրաստման ծրագրերի իրականացմանը:

Գործողություն 6.1.2 Ֆակուլտետի գործառույթների բաշխման արդյունավետության շարունակական գնահատում, բարելավում:

Գործողություն 6.1.3 Ֆակուլտետի ներսում համագործակցային և մասնակցային կառավարման մշակույթի շարունակական զարգացում:

Գործողություն 6.1.4 Հետադարձ կապի մշտական ապահովում

Ակնկալվող արդյունքներ

Ֆակուլտետի կառավարման համակարգի արդյունավետության և ճկունության բարձրացում

կառավարման գործընթացների թափանցիկություն, հաշվետվողականություն

շարունակական ապահովում

ՆՊԱՏԱԿ 7. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 7.1. Զարգացնել ուսանողակենտրոն կրթական միջավայր

Գործողություն 7.1.1. Ուսանողների աջակցության ու խորհրդատվական ծառայությունների համակարգի զարգացում և ուսանողակենտրոն կրթական միջավայրի շարունակական ամրապնդում:

Խնդիր 7.2. Ներառական և հավասար կրթական միջավայրի ապահովում

Գործողություն 7.2.1 ապահովել հավասար հնարավորություններ բոլոր ուսանողների համար՝ անկախ սոցիալական, կրթական կամ անհատական առանձնահատկություններից:

Գործողություն 7.2.2 Կրթական գործընթացներում մատչելիության և հավասար մասնակցության ապահովման մեխանիզմների շարունակական ապահովում:

Խնդիր 7.3. Ուսանողների մասնակցության ընդլայնում ֆակուլտետի կառավարման գործընթացներում:

Գործողություն 7.3.1 Ուսանողության շարունակական ներգրավում ֆակուլտետի խորհրդակցական և աշխատանքային խմբերում:

Գործողություն 7.3.2 Ուսանողական նախաձեռնությունների և նախագծերի խրախուսում:

Ակնկալվող արդյունքներ

Ուսանողների աջակցության և խորհրդատվական ծառայությունների հասանելիության ու արդյունավետության բարելավում

Դեկանի թեկնածու՝ պ.գ.թ., դոցենտ Մ. Բրուտյան